

ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՄԱՆՈՒԿ ԱՔԵՂՅԱՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Վ. Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Մանուկ Աքեղյանի գիտական միտքը միշտ էլ իր սկզբնավորումն ստացել է հետազոտական նյութի մանրազնիք, հետևողական ու բանիմաց քննությունից, հենվել կոնկրետ փաստերի բարեխիղճ, բազմակողմանի ու խոր վերլուծության վրա և այդտեղից ու այդ եղանակով ընթացել դեպի տեսական եզրահանգումն ու ճշմարիտ, հիմնավորված ընդհանրացումը: Իր գիտական գործունեության ընթացքում նա երբեք չղեկավարվեց կանխակալ կարծիքով, երբեք չգայթակղվեց անցյալի մշակութային երևույթների անհարկի արդիականացմամբ, ինչպես հաճախ վարվում էին նրան ժամանակակից որոշ ուսումնասիրողներ, և չփորձեց հետազոտման ենթակա փաստերը՝ հակառակ սեփական խղճի ու գիտական համոզմունքի, հարմարեցնել իշխող գաղափարական տեսություններին ու որոշումներին:

Գիտահետազոտական այս սկզբունքը, որ արտահայտությունն էր Աքեղյանի թե՛ ազնիվ բնավորության ու սկզբունքայնության և թե՛ դասական բանասիրության գծով ստացած հիմնավոր կրթության, նրա գիտական վաստակին հաղորդեց մնայուն արժեք և ժամանակների քննությանը դիմանալու կայուն հատկություն: Նույն սկզբունքը զուգակցելով գիտական այլ, հատկապես երևույթներն իրենց զարգացման և փոխակապակցության մեջ ընկալելու, դրանք պատմական մոտեցմամբ գնահատելու չափանիշների հետ, Աքեղյանը հայոց հին գրականության տարբեր խնդիրներին նվիրած իր աշխատություններում և առանձնապես դրանց հանրագումարն ու ընդհանրացումը ներկայացնող երկհատոր «Հայոց հին գրականության պատմության» մեջ հասավ հայոց հին գրական մշակույթը բնորոշող բոլոր էական հատկությունների կուռ և ամբողջական համակարգմանը: Այդ համակարգն ընդգրկում է իր մեջ ինչպես առանձին հեղինակների ներդրած ավանդի և ստեղծագործական ժառանգության ամենակարևոր կողմերի բնութագրումն ու արժեքավորումը, այնպես էլ գրականության պատմության պարբերացման միանգամայն ինքնատիպ հիմնավորումը, գրականության զարգացման ընդհանուր օրինաչափությունների, ձևի ու բովանդակության և այլ հարցերի բացահայտումը:

Այդ հարցերից է նաև հայոց հին գրականության ազգային յուրահատկության խնդիրը, որին Աքեղյանը թեպետ չի նվիրել հատուկ ուսումնասիրություն՝ համապատասխան հարցադրմամբ ու եզրակացություններով, բայց որն իբրև որոշակի լուծում գտած հայացք ու համոզմունք ընկած է նրա գրականագիտական հետազոտությունների հիմքում և երևան է գալիս թե՛ բնույթի և թե՛ անուղղակի դրսևորումներով:

Վերջենք Աքեղյանի առաջ քաշած կարևորագույն ելակետային դրույթներից մեկը, որ գրական-գեղարվեստական նյութի խորաթափանց և համոզկեր քննությանը հաստատված է նրա՝ աշխատություններում: Հայտնի է, որ ըստ Աքեղյանի՝ հայոց հին գրականությունն իր բոլոր շրջաններով ներկայանում է որպես հայ ժողովրդի ներքին ու արտաքին կյանքի, հայ պատմական իրականության, հայ ոգու և ձգտումների անմիջական արտացոլք: Սույն

դրույթն ինքնին արդեն վկայում է այն մասին, որ Արեղյանի տեսակետով հայոց հին գրականության էական յուրահատկությունը նրա ազգային բնույթն ու բովանդակությունն է։ Այլապես՝ անհնարին է պատկերացնել մի գրականության, որ լայնառապես նվիրված լինելով մեկ ժողովրդի բազմադարյա և լայնորի ու ճակատագրի արտացոլմանը, չլինի ազգային։ Սակայն սա լուրորդին էլ չի նշանակում, թե Արեղյանն իսպառ ժխտում է հարևան ժողովուրդների գրականությունների հետ հայոց հին գրականության ունեցած առնչությունները։ «Մեր հին գրականությունը,—կարդում ենք նրա գրականության պատմության առաջաբանում,—ինչպես և ամեն կուլտուրական երևույթ, հարկավ, մեկուսի և անջատ չէ նաև այլ ազգերի ժամանակակից կուլտուրայից ու մասնավորապես գրականությունից։ Գրավոր դպրությունը նույնիսկ ձգակ է ասորիների ու հույների հետ ունեցած հաղորդակցության հետևանքով և... Թարգմանության միջոցով յուրացրել է ընդհանուր քրիստոնեական, առանձնապես բիզանդական գրական տեսակները¹։ Խնդրի էությունն այն է, որ այդ առնչությունները, նույնիսկ այլ գրականություններից կրած որոշ ազդեցությունները, ըստ Արեղյանի, բացառապես վերաբերում են ձևական կողմերին, ընդհանուր քրիստոնեական գրական տեսակներին՝ ամենևին չխաթարելով հայ հին գրականության ազգային նկարագիրը։ «Ինչքան էլ մեր առաջին գրողները հետևում են ուրիշներին, բայց և այնպես նրանց երկերն ընդհանրապես մշակված են ազգային բովանդակությամբ, կապված են իրենց միջավայրի և դարաշրջանի իրական պայմանների հետ և բխում են ժամանակի պահանջից... Մեր գրավոր դպրությունն օտար գրականությունների ազդեցությունը կրելով հանդերձ՝ իր ներքին էությունը ազգային է»,—բացատրում է Արեղյանը²։ Ուստի և միանգամայն հիմնավոր է դեռ 1917 թ. հրատարակված «Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության» գրքույկի կապակցությամբ բանասեր Ս. Հարությունյանի կատարած այն ընդհանրացումը, թե «գրականության զարգացումը գիտելով կոնկրետ հայ երկրի ու ժողովրդի կյանքի ու ճակատագրի սերտ առնչությամբ և համարելով նրա գոյի ու գիտակցության գեղարվեստական անդրադարձման արգասիք, Արեղյանը հայ գրականության ոգին ու նկարագիրը համարում է հայկական ինքնուրույն երևույթ, որով վերջ է տրվում գրականության նախորդ պատմաբանների՝ հայ գրականության վրա օտար ազդեցությունների դերագնահատման ոչ ճիշտ տեսությանը³։

Հայոց հին գրականության ազգային յուրահատկության արեղյանական ըմբռնումն ըստ ամենայնի իր դրսևորումն է գտել գրականության պատմությունն պարբերացման մեջ, որ կատարել է գիտնականը «ոչ թե ձևականորեն», ինչպես վարվել են իր նախորդները, «այլ ըստ բովանդակության, նայելով գրականության մեջ արտահայտված պատմական իրականությանը⁴։ Առաջին շրջանը, որն ունի «նախնական առասպելա-պատմական բանահյուսություն» ընդհանուր խորագիրը, ընդգրկելով հնագույն ժամանակներից մինչև III դարն ստեղծված և հին մատենագիրների կողմից գրաված ընդհանուր գրականությունը, հատկապես՝ հին առասպելներն ու ավանդական վեպը, ինչպես ցույց են տալիս գիտնականի կատարած բժախնդիր վերլուծություններն ու մեկնարանությունները, թեպետ կրում է ազգային կյանքի, մտածողության ու ճակատագրի ուժեղ կնիքը, այնուամենայնիվ ծագումով և ժանրային հատկությամբ հանդես է բերում երկակի բնավորություն։ «Առասպելից տարբեր ծագում ունի ավանդական վեպը,—նկատում է Արեղյանը—Մինչև առասպելներն ունեն ավելի դիցաբանական բնավորություն, շատ օրջ պատմական ազդեցություն են կրած և հաճախ փոխառություն են ուրիշներից—վեպն, ընդհակառակն, իր ծագումով բնիկ ազգային ինքնուրույն ստեղ-

¹ Մ ա ն ու կ Ա Ր Ե Ղ Յ Ա Ն. Երկեր. հ. Գ, Երևան, 1968, էջ 14։

² Նույն տեղում, էջ 133 (այս և հետագա ընդգծումները մերն են—Վ. Ն.)։

³ Ս ա Ր Գ Ի Ս Հ ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յ Ա Ն. Մանուկ Արեղյան, կյանքն ու գործը. Երևան, 1970, էջ 348։

⁴ Մ ա ն ու կ Ա Ր Ե Ղ Յ Ա Ն. Երկեր. հ. Գ, էջ 14։

ծագործություն է: Նրա նյութը պատմությունն է, այս բառն ընդարձակ մտքով առած, լինի իսկական, թե կեղծ պատմություն⁵: Այստեղ վիճելի է լուկ Վաճախ փոխառությունն են ուրիշներից» ձևակերպումը և դա՝ այն պարզ պատճառով, որ այլ ժողովուրդների առասպելների հետ հայկական առասպելների ունեցած շնչին նմանությունները, որոնք, ի դեպ, ոչ առանց հատուկ օանք և հմտություն ներդնելով է բացահայտում հետազոտողը, դեռ չեն մատնանշում սկզբնաղբյուր: Ինչ իմանաս, դուցե այդ առասպելների միջուկն արդեն ձևավորվել էր հնդեվրոպական տարբեր ժողովուրդների նախնական, համատեղ կեցության շրջանում: Սա մի կողմից, իսկ մյուս կողմից, որն ավելի հավանական է թվում, նմանությունները չեն կրում անմիջական ազդեցության հետքեր և առավելապես դիցաբանական ընդհանուր մտածողության, քան փոխառության արդյունք են:

Հայոց հին դրականության ազգային յուրահատկության մասին արեղյանական տեսակետն առավել հստակորեն ընդգծված է երկրորդ շրջանի բնութագրման մեջ, որը հայագետն անվանում է «եկեղեցա-քաղաքական մաքառման գրականություն»: Աչքի առաջ ունենալով III դարից մինչև XI դարի սկիզբն ստեղծված բանավոր և գրավոր մատենագրական ժառանգությունն իր գեղարվեստական հիմնական շերտերով ու էական գաղափարախոսության, Աբեղյանը՝ փաստորեն առաջինը մեր գրականության պատմության ներքից, կարողանում է առանձնացնել այդ ժամանակաշրջանի ողջ գրականության գլխավոր բովանդակությունը և դրանով իսկ՝ նաև բուն ազգային առանձնահատկությունը: Աբեղյանի հայացքով երկրորդ շրջանի գրականության մեջ «երևան է գալիս ազնվականական և եկեղեցական շահերի պաշտպանությունը: Թե՛ գրավոր դպրության և թե՛ վիպական բանահյուսության մեջ... իշխում է մի ընդհանուր միտում—ազգային իրիստ մաքառում նախ Պարսից Սասանյան տերության ու հույների, հետո՝ արաբական բռնապետության դեմ: Մյուս կողմից, այս շրջանի գրականության համար բնորոշիչ է նաև եկեղեցական դասի ձգտումն ու պայքարն իր գաղափարախոսությունը հաստատելու հայ ժողովրդի մեջ»⁶: Մի այլ տեղ, հենց մաքառման գաղափարախոսության մեկնակետից անդրադառնալով գրավոր դպրության և վիպական բանահյուսության ընդհանրության ու տարբերության խնդրին, հետազոտողը նշում է. «Եթե այս վերջինիս (իմա՝ նոր վիպական բանահյուսության—Վ. Ն.) գլխավոր մոտիվն էր զենքով մաքառում, կռիվ պարսիկների դեմ՝ հայկական ազգային անկախության համար, ... գրավոր դպրության, ինքը մի զենք էր կուլտուրական պայքարի ու մաքառման համար ընդդեմ պարսիկների, ապա հույների և արաբների: Նույն նպատակին ծառայում էին... նաև թե՛ քրիստոնեական-կրոնական ոգու և գաղափարախոսության ծավալումը կյանքի մեջ և թե՛ մաքուր կրոնական գրվածքները, քանի որ սրանք էլ վերջին հաշվով մաքառելու միջոցներ էին ընդդեմ հեթանոսության-պարսիկների և արաբների, իսկ դավանաբանական երկերն՝ ընդդեմ հույների»⁷:

Մաքառման գրականության տեսությունը հնարավորություն տվեց հեղինակին մի ընդհանուր առանցքի շուրջ կենտրոնացնելու ավելի քան յոթհարյուրամյա ժամանակաշրջանում ստեղծված թե՛ թարգմանական և թե՛ ինքնուրույն ամենատարբեր կառուցվածքների, ժանրերի և կիրառական ոլորտների պատկանող բազմաթիվ գրական հուշարձաններ՝ կանոններ, ճառեր, դավանաբանական գրություններ, սրբախոսական, պատմագրական, վիպական-բանահյուսական, հոգևոր և աշխարհիկ բանաստեղծական երկեր և այլն: Ինքնուրույն դրական հուշարձանների ազգային ոգին և մաքառողական միտումն ինքնին ակնհայտ է, և դրա արեղյանական հիմնավորումը տվյալ դեպքում չի զգում հատուկ մեկնության կարիք, ուրեմն այստեղ տեսնենք, թե ըստ հայագետի՝ օտար ճնշումների դեմ ուղղված հայ ազգային մաքառ-

⁵ Նույն տեղում, էջ 50:

⁶ Նույն տեղում, էջ 15:

⁷ Նույն տեղում, էջ 100:

ման միտումն ինչ հիմունքով է երևան եկել թարգմանական գրականության լինազավառում։ «Իրանց մեծ մասն իմաստասիրական, ճարտասանական ու բերականական գրվածքներ են,—բացատրում է Արեղյանը։—Այսպիսի գրքերի թարգմանության հիմքն ևս հասկանալի է։ Ինչպես որ առաջին դարերում քրիստոնյաները փիլիսոփաների հարձակումներից պաշտպանվելու համար՝ իրենք էլ սովորում էին հակառակորդների ուսումն ու մեթոդները, նույնպես վարվելն անհրաժեշտ էր և հայ վարդապետների համար։ Դավանարանական վեճերի հիմքը հաճախ մետաֆիզիկական կամ մտահայեցական խնդիրներ են եղել։ Կարելի չէր հակառակորդների դեմ ելնել պարզամիտ ձևերով, պետք էր այդ վեճերի իմաստի մեջ թափանցել և դրանց նրբություններն ըմբռնել։ ...Ուստի և ձգտում են յուրացնելու նաև այն ուսումն ու գիտությունը և գրական ու ճարտասանական եղանակները, որոնք ընդունված էին Բիզանդիայում»։ Ինչպես դժվար չէ նկատել, գիտնականը հայ թարգմանական գրականության գոյությունը ևս, ելնելով նրա բնույթից և նպատակից, իմաստավորում է ազգային մաքառման պահանջով։ Ի մի բերելով ասվածը, կարելի է եզրակացնել, որ մաքառման գրականության տեսությամբ Արեղյանը փորձեց բացահայտել միայն հայ հին գրականությունը բնորոշ այն յուրահատուկ գիծը, որը պայմանավորված էր օտար իշխողների դեմ որոշակի ժամանակաշրջանում հայ ժողովրդի մղած կրոնական և քաղաքական պայքարի արացողմամբ։

Բնութագրելով հաջորդ շրջանի, այն է՝ XI—XVII դդ. գրականությունը, որը բաժանվում է վերելքի ու անկման փուլերի, գիտնականը նրա էությունը տեսնում է հայոց կյանքի ու մտածողության աշխարհականացման հետևանքով կրոնական կաշկանդումից ազատագրվելու, «հեթանոսական դարերի բուն աշխարհիկ ոգին և աշխարհայեցությունը» վերածնելու մեջ⁸։ Ուստի և այս շրջանի գրական արտադրանքը կոչելով «վերածնության գրականություն», ընդհանրաբար Արեղյանը փորձում է նրա ազգային յուրահատկությունները վեր հանել եվրոպական վերածննդի գրականության հետ կատարած համեմատությունների ճանապարհով։ Վկայակոչելով X դարից ի վեր հայ գրականության և մասնավորապես բանաստեղծության ձեռք բերած աշխարհիկ բազմաթիվ գրական նոր տեսակների ու թեմաների իրողությունը, նա ընդգծում է այդ երևույթի վաղեմությունն ու անկախությունը եվրոպականից. «Որ մեր բանաստեղծությունն այսպես շուտ, եվրոպականից շատ վաղ է թոթափել միջնադարյան ոգին,—գրում է նա,—զրա պատճառը պետք է տեսնել անշուշտ ոչ միայն ցեղի ընդունակ բնավորության ու նրա այն մեծ շարժման մեջ, որ ունեցել է X դարում, այլ և իր հայրենիքի դրության մեջ... Այս ներքին ու արտաքին հանգամանքների շնորհիվ ահա մեր բանաստեղծության մեջ լինում է մի կատարյալ հեղաշրջում, որ ընկնում է Պրովանսի մոտավորապես նույնպիսի բանաստեղծության հետ միաժամանակ, հարկավ, Պրովանսից անկախ, քանի որ մեր բանաստեղծությունն իր նախապատրաստությունը կյանքի մեջ ունենում է X—XI դարերում, երբ Ֆրանկների հետ հաբարերսություն չունեին հայերը։ Հաջորդ XII դարի վերջում և XIII-ի սկզբում միայն, այն էլ Արևելքում ունեցած շփումով, նոր դեռ մտավոր շարժում էր սկսում առաջ գալ Իտալիայում և Ֆրանսիայում, ուրեմն՝ մերինից բավական ուշ։ Բացի այդ՝ մեր բանաստեղծության զարգացման ընթացքը տարբեր է լինում եվրոպականից»⁹։

Այնուհետև՝ վերցնելով միայն Պրովանսի սիրային երգը XIV—XV դդ. և վկայակոչելով այդ մասին Ֆրանսիացի նշանավոր գրականագետ Դուստավ Լանսոնի կարծիքը, Արեղյանը նկատում է, թե մինչ Պրովանսի բանաստեղծները գրում են շինծու ձևերով, միևնույն ընդհանուր կաղապարներով, կնոջ պաշտամունքի ու գեղեցկության վերացական գովքով, քարացած, խրթին ու դժվար հասկանալի արտահայտություններով և հորինում են լոկ

⁸ Նույն տեղում, էջ 114—115։

⁹ Տե՛ս Մ աս ն ու կ Ա ր Ե ղ յ ա ն. Երկեր. հ. Դ, Երևան, 1970, էջ 17—20, 397—398։

¹⁰ Նույն տեղում, էջ 398։

դատողության բանաստեղծություն, ուր չկա անհատական կենդանի հույզ, չկա բնության սեր, «մեր սիրո երգը... բոլորովին ուրույն և ավելի հաջող ընթացք է ունենում: X—XI դարերում արդեն լինում է Աստվածածնի կրոնական գովքը գուսանական սիրերգի մոտիվներով. ապա վարդ ու սոխակի պատկերով փառաբանվում է սիրաբորբոք տարփանքը. XIII դարի վերջում կամ XIV-ի սկզբներում այդ երգն ազատվում է այլաբանությունից... Մյուս կողմից՝ բանաստեղծությունը XII դարից սկսած ձգտում է ազատվել կաշկանդանքից, խրթնաբանություններից ու «ծածուկ ճառերից», և Դանտեից մի դար առաջ արդեն մեզանում կարիք է զգացվում կենդանի խոսակցական լեզվով գրելու»¹¹: Ուրեմն՝ ըստ Աբեղյանի, հայ միջնադարյան բանաստեղծությունը իր ժամանակակից եվրոպական բանաստեղծությունից տարբերվում է ոչ միայն մտավոր նոր շարժման ավելի վաղ ձևավորմամբ, այլև զարգացման իր ներքին հնարավորություններով և ուրույն բնույթով:

Անշուշտ, հայոց հին գրականության ազգային յուրահատկության մասին Աբեղյանի հայացքը չի սահմանափակվում գրականության զարգացման տարբեր շրջաններին վերաբերող բնութագրումներով: Այդ հայացքը, լինելով կոնկրետ նյութերի հետազոտությունից կատարված ընդհանրացման արդյունք, բնականաբար արտահայտվել է նաև առանձին գրողների ստեղծագործական վաստակին նրա տված գնահատումների ընթացքում: Այսպես, անդրադառնալով «հայոց փափկասուն տիկնանց» մասին Նղիշի հայտնի գովքին, Աբեղյանն ընդգծում է դրա գեղարվեստական եզակի արժեքն ու ինքնատիպ բնույթը, այն էլ՝ ժամանակի համաշխարհային գրականության մակարդակով. «Դա մեր Պատմագրի երկի վերջին հատվածն է, միաժամանակ և նրա բանաստեղծական ընտրելագույն կտորներից մեկը, որի նմաններն իր ժամանակի համաշխարհային գրականության մեջ ահագամ քիչ են»¹²: Գրեթե նույն մակարդակով է նա արժեքավորում նաև Գրիգոր Նարեկացու գլուխգործոցը. «Ողբերգության Մատյանի մեջ,—գրում է գիտնականը,—որ իսկապես մեր առաջին մեծ բանաստեղծական երկն է, մի նոր արվեստավորություն է մի նոր շնչով մնայուն ձև են ստացել ոչ միայն կրոնավորի անհատական ու դասային, այլև ընդհանուր մարդկային հավիտենական գաղափարներ ու զգացումներ, ապրումներ ու անրջանքներ, և այս՝ XI դարի սկզբում, այն ժամանակ, երբ եվրոպական նոր ազգերը ոչինչ կամ գրեթե ոչինչ չունեին»¹³: Իսկ Ներսես Շնորհալու «Ողբ Նդեսիոյ» երկի ինքնատիպությունը Աբեղյանը տեսնում է պատմական որոշակի իրադարձությունը ստեղծագործական նյութ դարձնելու, հարազատ երկրի ու ժողովրդի ճակատագրի կենսական հարցերին արձագանքելու հատկության մեջ: Կարծում ենք, անվանի գրականագետի ըմբռնմամբ՝ այս հատկության մեջ, որ Շնորհալու ստեղծագործությունն արմատապես տարբերվում է նույն XII դարում հորինված և 1930—40-ական թթ. ողջ խորհրդային Միությունով մեկ փառաբանվող արևելյան հեքիաթատիպ հայտնի պոեմներից, այսպես հազիվ թե Աբեղյանը դիմեր գրական հուշարձանի բնութագրման հետևյալ եղանակին. «Իսկական բանաստեղծական հղացմամբ և արվեստով գլուխ բերված մի մեծ քնարական քերթված է Շնորհալու այս երկը,—նշում է հայագետը:—Դրա նյութը ո՛չ կրոնական է և ո՛չ կրոնավորներին է վերաբերում, այլ աշխարհիկ է: Բայց դա մի արևելյան արաբական հեքիաթ էլ չէ, առանց ժամանակյան, տեղական և ազգային գույնի, որի մեջ գեղեցիկ չափածո բանաստեղծությամբ լալագին եղանակով պատմված լինել կորցրած սիրուհու մասին, ու սիրահար հերոսը, մենակ կամ հավատարիմ ընկերի հետ, ելնել իր սիրածին որոնելու և բազմաթիվ բնական կամ անբնական արկածներից հետո գտնել նրան: Մեր այս կրոնավոր բանաստեղծը հեռու է աշխարհիկ

¹¹ Նույն տեղում, էջ 398—399:

¹² Մանուկ Աբեղյան. Ծրկեր. հ. Գ, էջ 342:

¹³ Նույն տեղում, էջ 587:

սիրույց։ Դրա այս թերթիվածի նյութը պատմական է. դրա մեջ վիպերգված է հեղինակի իրեն օրով կատարված մի պատմական եղելություն¹⁴։

Ինքնին հասկանալի է, որ Հայոց հին գրականության ազգային յուրահատկության արևելյանական ըմբռնումն ամենից առաջ կապվում է գրական երկի դադարափութաբան-գեղարվեստական բովանդակության այն կողմերի հետ, որոնք պայմանավորված էին հայոց կյանքի առանձնահատկությամբ։ Որինակ, լացահայտելով Հովհաննես Սարկավազ Իմաստասերի Ղևոնդյանց շարականի դադարափութական էությունն ու գրական-պատմական նշանակությունը, Արեղյանն այն բնութագրում և արժեքավորում է զուտ հայությանը վիճակված տեղական պատմական ճակատագրի պատկերման և հայ բունաստեղծությանը ներհատուկ նյութի սկզբնավորման տեսանկյունից։ Տրված հայ ժողովրդին հավաքելու տենչն ու ձգտումն ահա դառնում է մի նվիրական իղձ ու աղոթք,—գրում է Արեղյանը,—և շատ վաղ... Սարկավազ Վարդապետի ձեռով մտնում մեր ժամերգության մեջ։ Այստեղ դեռ չկա քաղաքական անկախության խնդիր, այլ միայն տառապանքից ազատվելու և Հայաստանում մնալու մի իղձ է այդ։ ...Եվ քանի որ հայ ժողովրդի վիճակը նույն է մնացել XI դարից, քանի որ կրկնվել են կոտորածները և ժողովրդի վտարանդումը, ուստի և այդպիսի թեմայով երգը, անգամ աղոթքը, հարատեղ և կրկնվել է մինչև XIX դարում և դեռ։ ...Դա իր բովանդակությամբ մի ամբողջ գրական տեսակ է, որ իր սկիզբն առնում է Սարկավազ Վարդապետի այն ըստ երևույթին աննշան հոգևոր երգից¹⁵։ Փաստորեն նույն մոտեցմամբ է գնահատվում նաև Արիստակես Լաստիվերտցու «Պատմություն», Շնորհալու և Ստեփանոս Օրբելյանի ողբերի, Ֆրիկի հայտնի բանաստեղծությունների, Մկրտիչ Նաղաշի պանդխտության տաղերի և այլ ստեղծագործությունների ազգային և հայրենասիրական բովանդակությունը։

Սակայն, անհրաժեշտ է ավելացնել, որ առաջնությունը տալով բովանդակությանը, Արեղյանն, այնուամենայնիվ, իր ուշադրությունից դուրս չի թողնում նաև ղևարվեստական ձևի խնդիրները։ Այս խմբատով հատկանշական է հայկական տաղաչափության մասին նրա առաջ քաշած տեսությունը։ Հայ լաստեղծությանը բնորոշ բարձրացող ուժով բոլոր երեք հիմնարան ձևի շափերը (յամբական, անապեստյան և յամբ-անապեստյան) իրենց բանական բազմաթիվ դրսևորումներով, ըստ Արեղյանի, սերտորեն կապված են հայերենի շեշտի և վանկերի ամանակի հետ, ինչից լեզվի բնական ուրտարեման արդյունք է։ «Այսպես, ուրեմն,—տաղաչափությանը նվիրված աշխատության մեջ գրում է նա,—մեր երեք հիմնական ձևի շափերը, ինչն այսօր ուրեքով թե անդամներով, համապատասխանում են հայերենի տոնգունությանը—պրոսոդիային, և հենց այդ պատճառով մի անգամ որ հնարվում է ժամանակներում լեզուն իր պրոսոդիայի համեմատ շափեր է ձևաբերել, դրանք գործածում է մինչև այժմ ևս, քանի դեռ լեզվի պրոսոդական փոփոխությունները չեն փոխվել»¹⁶։ Եվ քանի որ հայկական բարձրացող ուժով շափերն անմիջականորեն կախված են հայերենի պրոսոդական հատկություններից, ուրեմն, իր այս դրույթով Արեղյանն անուղղակիորեն հաստատում է նաև հայ հին բանաստեղծության մեջ արդեն ձևավորված այդ շափերի ազգային ծագումը, էլ չենք խոսում 7 և 8-վանկանի երկտողերով յամբ-անապեստյան այն պարզոտնյա տեսակի մասին, որի «հայերեն» կամ փոքր-ինչ աղճատված «հայրեն» անունը Արեղյանը մեկնաբանում է հենց լատին լույն նշանակությամբ։ «Բայց քանի որ այդպես կոչվում են միայն այս շափով հորինված երգերը, այդ ցույց է տալիս, որ այս շափը համարվել է հայերենին հատուկ մի ոտանավոր»¹⁷։

Արեղյանը, նույնիսկ այն դեպքում, երբ հիմնավոր վերլուծությամբ

¹⁴ Մ ա ն ու կ Ա Ր Ե Ղ Յ Ա Ն. Երկեր. հ. Դ, էջ 127—128։

¹⁵ Նույն տեղում, էջ 71—72։

¹⁶ Մ ա ն ու կ Ա Ր Ե Ղ Յ Ա Ն. Երկեր, հ. Ե, Երևան, 1971, էջ 330։

¹⁷ Նույն տեղում, էջ 226—227։ Տե՛ս նաև հ. Բ, էջ 27—28։

հաստատում է Կոստանդին Երզնկացու «Յանուն անեղին աստուծոյ և մեծին» սկսվածքով տալը Ֆիրդուսու երկի «կտրած մոթաքարեր» չափի ձևական ազդեցությամբ հորինված լինելու փաստը, չի մոռանում նաև լրացնել, որ այդ բանաստեղծությունը լոկ արվեստական արտասանությամբ բնական արտաբերման ժամանակ դրա, ինչպես նաև Գրիգոր Նարեկացու «Ծկեզեցւոյ» տաղի չափը ոչ այլ է, եթե ոչ հայկական անապետյան 11-վանկանի ոտանավորը՝ սկզբից մի յամբական ոտքով¹⁸։

Ասվածն ամփոփելու դեպքում կարելի է նշել, որ ինչպես հայ հին գրականության հետազոտման շատ բնագավառներում, այնպես էլ նրա ազգային առանձնահատկության բացահայտման ուղղությամբ Արեղյանը հանդես է գալիս որպես հիմնադիր և ուսուցիչ։ Այս ասպարեզում նրա կառարած դիտարկումներն ու մշակած սկզբունքները կայուն, հետանկարային նախադրյալներ են նոր, առավել հիմնավոր ու նպատակադիր ուսումնասիրություն անելու համար։

МАНУК АБЕГЯН И ВОПРОС НАЦИОНАЛЬНОГО СВОЕОБРАЗИЯ ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

В. С. НЕРСИСЯН

Резюме

Хотя Манук Абегиан и не оставил специального исследования, посвященного вопросу национального своеобразия древнеармянской литературы, он обращался к нему в разных трудах. Исходным тезисом Абегиана является рассмотрение древнеармянской литературы как непосредственного отражения исторической жизни народа, его духа и устремлений. Особенности содержания и формы древнеармянской литературы он отмечает как при характеристике основных тенденций развития армянской литературы в различные периоды, так и при подтверждении самостоятельности и давности армянских литературных явлений в сравнении с иными—восточными и европейскими литературными явлениями.

¹⁸ Ֆիրդուսի. բանաստեղծի ծննդյան «աղարամյակին նվիրված ժողովածու. Երևան, 1934, էջ 119—128։